

**«Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության
գարգացման ծրագիր**

Ընդհանուր տեղեկատվություն բժշկական կենտրոնի վերաբերյալ

Ախուրյանի բժշկական կենտրոնը գտնվում է Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Ախուրյանի խճուղի 14 հասցեում: Աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 108 անձ: «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ԱԱՊ ծրագրով սպասարկում է 18 տարեկանից բարձր ազգաբնակչության 8419, մանկական 22 և 36266 ազգաբնակչության դիսպանսերային ծրագրով: Ընկերության գույքի և բժշկական սարքավորումների հիմնական մասը 25-30 տարվա վաղեմություն ունեն և ֆիզիկապես մաշված են: Կապիտալ վերանորոգման ենթակա են 1979 թվականին շահագործման հանձնած քարաշեն կառույցները:

«Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող բժշկական օգնության և սպասարկման տեսակները.

1. Առաջնային բժշկական օգնություն.

- ✓ Ընտանեկան բժշկություն
- ✓ Բժշկական ընդհանուր պրակտիկա

2. Մասնագիտացված բժշկական օգնություն

- ✓ Ներքին բժշկական (ընդհանուր թերապևտիկ)
- ✓ Մանկաբուժական
- ✓ Ընդհանուր վիրաբուժություն(այդ թվում՝ մանկական վիրաբուժություն)
- ✓ Անեսթեզիոլոգիական
- ✓ Վերակենդանացման
- ✓ Նյարդաբանական(այդ թվում՝ մանկական նյարդաբանական)
- ✓ Հոգեբուժական
- ✓ Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն
- ✓ Մաշկաբանական
- ✓ Վեներաբանական
- ✓ Լաբորատոր- ախտորոշիչ
- ✓ Ճառագայթային ախտորոշիչ
- ✓ Ֆիզիոթերապևտիկ
- ✓ Ֆունկցիոնալ ախտորոշիչ(էլեկտրասրտագրություն)

3. Նեղ մասնագիտաված բժշկական օգնություն և սպասարկում

- ✓ Ուռուցքաբանական
- ✓ Մրտաբանական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Աղետամոքսաբանական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Ներզատաբանական
- ✓ Տուբերկուլոզային
- ✓ Վարակիչ հիվանդությունների (այդ թվում՝ մանկական)
- ✓ Քիթ-կոկորդ-ականջաբանական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Ակնաբանական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Պրոկտոլոգիական
- ✓ Վնասվածքաբանական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Օրթոպեդիական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Թերապևտիկ ստոմատոլոգիական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Վիրաբուժական ստոմատոլոգիական (այդ թվում՝ մանկական)
- ✓ Կլինիկական դեղորայքային

Չարագման ծրագրի նպատակները

- ✓ Բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավում
- ✓ Հիվանդության վաղ հայտնաբերում և բուժում
- ✓ Ճշգրիտ ախտորոշում բուժասրբավորումների և բուժտեխնիկայի արդիականացման միջոցով
- ✓ Բուժման ընթացքի նկատմամբ հետևողականություն և հետադարձ կապի ապահովում
- ✓ Բուժանձնակազմի վերապատրաստումների կազմակերպում ըստ անհրաժեշտության
- ✓ Մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը հնարավորինս մոտեցնել միջազգային չափանիշներին՝ բարձրացնելով հիվանդների վստահությունը բժշկական կենտրոնի նկատմամբ
- ✓ Բժշկական կենտրոնում առկա բուժօժանդությունների ցանկի ընդլայնում, ինչպես նաև բուժանձնակազմի համալրում բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող բուժաշխատողներով և որակական նոր՝ առավել բարձր մակարդակի ապահովում
- ✓ Բուժաշխատող - պացիենտ փոխհարաբերությունների հիմքում դնել մարդը՝ որպես գերագույն արժեք գաղափարը
- ✓ Ձեռնարկել շինությունների կոամետիկ և կապիտալ վերանորոգումներ՝ ըստ առաջնային անհրաժեշտության

Ռիսկային գործոններ

- ✓ Մասնագիտական պրոֆեսիոնալիզմ
- ✓ Արդի բուժաբքավորումների և բուժտեխնիկայի բացակայություն
- ✓ Շենքային պայմանների հարմարեցվածության ոչ բավարար մակարդակ
- ✓ Ֆինանսատնտեսական վիճակ

Նպատակների իրականացման ուղիներ

- ✓ Վարել հմուտ ֆինանսատնտեսական գործունեություն և ապահովել խնայողություններ
- ✓ Ֆինանսական լրացուցիչ մուտքեր ապահովել վճարովի ծառայությունների, ինչպես նաև հարբժշկական ծառայությունների միջոցով
- ✓ Հնարավորինս ունենալ պետության աջակցությունը, բարեգործական կազմակերպությունների և անհատ բարերարների աջակցությունը, փորձել ներգրավել նաև համայնքին, ինչպես նաև օգտվել վարկային ծրագրերից:
- ✓ Ճիշտ պլանավորել բժշկական կենտրոնի ծախսերը եկամուտների համեմատ
- ✓ Ապահովել վերապատրաստումներին կադրերի պարտադիր մասնակցությունը
- ✓ Ապահովել բարձր որակավորում ունեցող մասնագետների հետ փոխշահավետ համագործակցություն
- ✓ Ապահովել բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից տեղում խորհրդատվական դասընթացների կազմակերպում և անցկացում՝ նպատակ ունենալով ներդնել բուժման ժամանակակից մեթոդներ

Ծրագրով ակնկալվում է ունենալ բուժկենտրոն, որտեղ պացիենտների հետ հարաբերություններում հատկապես կարևորված կլինի հետևյալ արժեքների և մշակույթի զարգացումը և շարունակական պահպանումը.

Որակ. հնարավորինս բարձրակարգ ախտորոշում, կանխարգելում և բուժօգնություն:

Հասանելիություն. մեր ծառայությունը պետք է հասանելի լինի բոլոր այն մարդկանց, ում անհրաժեշտ են մեր մատուցվող բժշկական ծառայությունները:

Հոգածություն. պացիենտների նկատմամբ ուշադրություն, բարեխղճություն, նրանց խնդիրների հասկացողություն և հոգատար արձագանք:

Հարգանք. մարդկային ազնվություն, մարդկանց իրավունքների նկատմամբ հարգանք, հիվանդների առանձնահատուկ կարիքների և զգացմունքների նկատմամբ հետաքրքրություն և պատշաճ արձագանք:

Թիմային աշխատանք. թիմային աշխատանքի և ոգու դրսևորում՝ առավել արդյունավետ և բարեհաջող արդյունքի համար:

Ֆինանսական թափանցիկություն. բացի հաշվապահորեն ձևակերպված գումարներից՝ հիվանդների կողմից այլ գումարների կամ նվերների բացառում:

Եզրափակիչ մաս

Գտնում եմ, որ բժշկական կենտրոնի ժամանակակից շենքային պայմանները, ախտորոշիչ սարքավորումները, առկա նորացված ծառայությունները և բարձր որակավորում ունեցող մասնագետները կնպաստեն, որ բժշկական կենտրոնը, արդյունավետ օգտագործելով իր ռեսուրսները, բարձրացնի ճանաչումը մասնագետների և հանրության շրջանում, ստանա լրացուցիչ ֆինանսական օգուտներ: